ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2025

ԱԳՐՈՆՈՄԻԱ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Նշվածներից ո՞րը պտղատու տնկարանի բաժին չէ:** *(1 միավոր)*

1) մայրուտը
2) բազմացման բաժինը
3) մթերման բաժինը
4) ձևավորման բաժինը

2 **Ի՞նչ նպատակով են պտղաբուծությունում օգտագործվում սերմնաբույսերը:** *(1 միավոր)*

1) ծաղկաբողբոջների աճեցման
2) պատվաստակալներ ստանալու
3) պտղի աճման արագացման
4) աճման շրջանը երկարացնելու

3 **Նշվածներից ո՞րը այգու տեղաձևման համակարգ չէ:** *(1 միավոր)*

1) շախմատաձև
2) ուղղանկյուն-քառանկյուն
3) զիգզագաձև
4) ուրվագծային

4 **Ապրոբացիայի ժամանակ ի՞նչ պետք է հաշվի առնել:** *(1 միավոր)*

1) տնկարկների մաքրասորտությունը
2) պատվաստի կպչողականությունը
3) աշնանային գունավորումը
4) կտրոնների մթերումը

5 **Որտեղի՞ց պետք է մթերել տնկանյութը ֆիլոքսերայով վարակված այգիների համար:** *(1 միավոր)*

1) նույն տարածաշրջանի հին այգիներից
2) ցանկացած այգուց
3) վայրի աճող վազի տարածքից
4) մաքրասորտ մայրուտ այգիներից

6 **Նշվածներից ո՞րը բնական կերային հանդակների բուսական ծածկոցի բուսական խմբավորումների բուսաբանական-տնտեսական խմբերից չէ:** ***(1 միավոր)***

1) դաշտավլուկազգիներ (հացազգիներ)
2) բակլազգիներ (թիթեռնածաղկավորներ)
3) կաղամբազգիներ (խաչածաղկավորներ)
4) բոշխեր- կնյուներ

7 **Նշվածներից ո՞րն է կիրառվում բույսերի վնասակար օրգանիզմների դեմ կենսաբանական պայքարում:** ***(1 միավոր)***

1) թունավար գրավչանյութեր
2) մակաբույծներ, գիշատիչներ
3) լուսաթակարդներ
4) որսող գոտիներ

8 **Ի՞նչ գույնի կպչուն ժապավեն են օգտագործում թրիպսների վաղ հայտնաբերման և դրանց քանակական դինամիկան պարզելու համար:** ***(1 միավոր)***

1) կապույտ
2) դեղին
3) սև
4) սպիտակ

9 **Ի՞նչ է վնասատուների ՏՎՇ-ն:** ***(1 միավոր)***

1) տեխնիկական վնասակարության շեմ
2) տարածվածության վնասակարության շեմ
3) տնտեսական վնասակարության շեմ
4) տակտիկական վնասակարության շեմ

10 **Նշվածներից ո՞րը հողի կարևոր ջերմային հատկություններից չէ:** ***(1 միավոր)***

1) ջերմակլանողականությունը
2) ջերմաճառագայթումը
3) ջերմունակությունը
4) ջերմամեկուսացումը

11 **Պեստիցիդներն ըստ օրգանիզմ ներթափանցման բնույթի ի՞նչ խմբերի են բաժանվում:** ***(1 միավոր)***

1) օրգանական, անօրգանական, կենսաբանական
2) կոնտակտ, աղիքային, ֆումիգացիոն
3) ինսեկտիցիդներ, ֆունգիցիդներ, հերբիցիդներ
4) թունավոր, անտիբիոտիկ, ֆիզիկական

12 **Կենսաբանական պայքարում վնասակար օրգանիզմների դեմ հիմնականում ինչի՞ միջոցով են պայքարում:** ***(1 միավոր)***

1) հիդրոֆագերով
2) նեկրոֆագերով
3) պանտոֆագերով
4) պեստիֆագերով

13 **Նշվածներից ո՞րը մոլախոտերի դասակարգման կենսաբանական հատկանիշ չէ:** ***(1 միավոր)***

1) սնման եղանակը
2) վնասակարության աստիճանը
3) կյանքի տևողությունը
4) բազմացման եղանակները

14 **Ի՞նչ խմբերի են բաժանվում ցանքաշրջանառություններն ըստ տնտեսական օգտագործման:** ***(1 միավոր)***

1) բանջարաբուծական, կենսաբանական
2) հողապաշտպան, դաշտապաշտպան, արոտային
3) դաշտային, կերային, հատուկ
4) բազմամյա, ինտենսիվ, այգեգործական

15 **Նշվածներից ո՞րը հողի բերրիությունը բնորոշող հասկացություն չէ:** ***(1 միավոր)***

1) պոտենցիալ բերրիությունը
2) կանխատեսվող բերրիությունը
3) բնական բերրիությունը
4) արհեստական բերրիությունը

16 **Բույսերի սելեկցիայում ըստ ի՞նչ հատկանիշի չեն գնահատում սելեկցիոն նյութը:** ***(1 միավոր)***

1) հիվանդությունների նկատմամբ դիմացկունության
2) արտադրանքի որակի
3) մշակության աշխատանքների կրճատման
4) մշակության աշխատանքների մեքենայացման

17 **Տրվածներից ո՞րը ջերմատան միջավայրի կառավարման համակարգ չէ:** ***(1 միավոր)***

1) ջեռուցմանը
2) սառեցմանը
3) լուսայինը
4) օդափոխությանը

18 **Տրվածներից ո՞րը բանջարեղենի բերքի որակի գնահատական չէ:** ***(1 միավոր)***

1) սննդա-ֆիզիոլոգիականը
2) շուկայականը
3) սպառողականը
4) տնտեսագիտականը

19 **Նշվածներից ո՞րը բանջարաբուծությունում բույսերի կյանքի մորֆոլոգիական փուլ *չի* հանդիսանում:** ***(1 միավոր)***

1) սերմնայինը
2) վեգետատիվ աճը
3) ֆոտոսինթետիկը
4) ռեպրոդուկտիվը

20 **Ո՞ր շարքում են նշված ջերմոցների ջեռուցման համակարգերը:** ***(1 միավոր)***

1) տեխնիկական, կենսաբանական, արևային
2) միկրոկլիմայական, խոնավացման, լուսային
3) կենսաբանական, ֆիզիկական, կառուցվածքային
4) մթնոլորտային, օդափոխական, ցանցային

21 **Հետևյալ պնդումներից 3-ը ճիշտ են: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. պտղատու տեսակների սերմնաբույսերի զարգացման 4 շրջաններն են՝ սաղմնային, պատանեկան, պտղաբերության, ծերացման
2. սաղմնային կամ սերմնագոյացման շրջանը շարունակվում է մինչև առաջին իսկական տերևների երևալը
3. սերմնաբույսերը պտղաբուծության մեջ օգտագործվում են վեգետատիվ բազմացման համար, քանի որ չեն պահպանում ժառանգականությունը
4. պատանեկան կամ երիտասարդացման շրջանը շարունակվում է մինչև նոր պտուղների սկզբնավորումը
5. պտղաբերման կամ վերարտադրության շրջանը սկսվում է սերմնաբույսերի 3-5 տարեկանից, երբ ծառերը սկսում են պտղաբերել
6. ծերացման կամ մահացման շրջանը բնորոշվում է սաղարթի «հաստացմամբ» և նոր շիվերի արագ աճով
7. պտղաբերման շրջանում կմախքային ճյուղերի վրա նոր շիվեր գրեթե չեն առաջանում, ճյուղերի ծայրամասերը չորանում են
8. պտղաբուծության մեջ սերմնաբույսերը չեն օգտագործվում պատվաստակալներ ստանալու համար
9. պտղատուների պատանեկան կամ երիտասարդացման շրջանը սկսվում է զույգ շաքիլատերևներից հետո աճող իսկական տերևների երևալով

22 **Հետևյալ պնդումներից 3-ը ճիշտ են: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. հողաբաժնյակները պետք է լինեն 8-12 հա քառակուսի կամ ուղղանկյուն ձևի, անկախ այգու չափից
2. հատապտուղների դեպքում բաժնյակները չեն կարող ունենալ 1-3 հա-ից ոչ ավելի մեծություն
3. այգու խնամքի և տնտեսական արդյունավետության տեսանկյուններից հողաբաժնյակի առավել հարմար մեծությունն է 4-6 հա քառակուսի կամ ուղղանկյուն տարածքը
4. բաժնյակների մեծությունը չի ազդում տնկվող տեսակների վրա
5. յուրաքանչյուր հողաբաժնյակ պետք է լինի միատեսակ հողատեսք, նույն թեքությամբ ու հարթությամբ
6. ծառատեսակների (օր.՝ տանձենի, ծիրանենի) հողաբաժնյակները ավելի խոշոր են, քան թփանման տեսակների դեպքում
7. բաժնյակները կարող են տեղաբաշխվել այնպես, որ նրանց երկար կողմերը չհամընկնեն վնասակար քամիների ուղղությանը
8. հատապտուղների բաժնյակները պետք է բաժանել 1-1,5 հեկտարանոց բանվորական հողավանդակների
9. բազմամյա տնկարկների օգտագործումն ավելի շահավետ է, երբ դրանք բաժանված են լինում համեմատաբար խոշոր հողամասերի

23 **Հետևյալ պնդումներից 3-ը ճիշտ են: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. խաղողի տնկանյութը կարող է լինել միայն յուրարմատ
2. խաղողի տնկանյութ աճեցնելու համար կտրոններ մթերում են աշնանը կամ գարնանը
3. կտրոններով բազմացնելիս կարող է լինել միայն 1–3-աչքանի կտրոններ
4. արմատակալումն արագացնելու համար անհրաժեշտ է կտրոնները թարմացնել և հիմքով դնել ջրի մեջ
5. կտրոնների կիլչեցումը նպատակ ունի միայն աչքերի բացումը արագացնելու համար
6. կտրոնների կիլչեցումը հաճախ կատարում են սառը ջերմոցներում կամ սառը խրամատներում
7. կիլչեցումից հետո կտրոնները կարելի է միայն նոր այգում տնկել
8. խրամատները պետք է փորել 100 սմ խորությամբ
9. ապրոբացիան և զանգվածային սելեկցիան պետք է կատարել բերքահավաքից 15–20 օր հետո

24 **Տրված պնդումներից 3-ը չեն համարվում պաշտպանված գրունտը բնութագրող առանձնահատկություն: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. բաց գրունտի համեմատ օգտագործվում են փոքր տարածքներ
2. հատուկ կառույցների ու տեխնիկական միջոցների (ապակեպատ կամ թաղանթապատ մակերեսներ, ջեռուցման համակարգեր և սարքեր, սնուցման օդափոխության և լուսավորության կարգավորիչ միջոցներ) առկայություն
3. աշխատանքների կրճատում և մեքենայացման հնարավորությունների բացակայություն
4. արտադրանքի բարձր ինքնարժեքը՝ պայմանավորված նյութական և ֆինանսական մեծ ներդրումներով
5. մակերեսի բացարձակ ինտենսիվ շահագործում (դարակների, կախոցների օգտագործում, միևնույն տեղում մի քանի վեգետացիոն շրջանով բույսերի մշակություն)
6. միջին բերքատվության ապահովում (բաց գրունտի համեմատ 0.5-1.0 անգամ ավելի)
7. շատ բարձր բերքատվության ապահովում (բաց գրունտի համեմատ 1.5-2 անգամ ավելի)
8. աշխատանքների առավել մեքենայացում և էլեկտրաֆիկացում, որոշ դեպքերում նաև ավտոմատացում (ծրագրավորման և բարձր տեխնոլոգիաների կիրառման հնարավորություն)
9. արտադրանքի ցածր ինքնարժեքը՝ պայմանավորված նյութական և ֆինանսական փոքր ներդրումներով

25 **Տրվածներից 3-ը բանջարային մշակաբույսերի մշակության տեխնոլոգիայում խնամքի աշխատանքներ չեն: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. հողի փխրեցում և քաղհան
2. սերմնանյութի ախտահանում
3. բուկլից կամ ակոսների պատրաստում
4. հողի նախասածիլումային հարթեցում
5. ծիլերի նոսրացում
6. վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումներ
7. բույսերի ամրացում /հենակավորում/
8. հողի հիմնական պարարտացում
9. խնամքի վիրահատական ձևեր

26 **Տրված պնդումներից 3-ը դաշտային կերաբույսերի լիարժեք խմբեր չեն: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. բազմամյա բակլազգի կերաբույսեր՝ առվույտ, երեքնուկ, կորնգան, գարի, վարսակ, իշառվույտ
2. բազամյա դաշտավլուկազգի կերաբույսեր՝ սիզախոտ, շյուղախոտ, ժիտնյակ, ռայգրասներ, ոզնախոտ
3. բազմամյա բակլազգի կերաբույսեր՝ առվույտ, երեքնուկ, կորնգան, իշառվույտ
4. բազամյա դաշտավլուկազգի կերաբույսեր՝ եգիպտացորեն, ժախ, սիզախոտ, շյուղախոտ, ժիտնյակ, ռայգրասներ, ոզնախոտ
5. սիլոսային մշակաբույսեր՝ եգիպտացորեն, արևածաղիկ, գետնախնձոր, սորգո, տրիտիկալե
6. միամյա բակլազգի խոտաբույսեր՝ վիկ, շաբդար, ոլոռ, հլածուկ, պերկո, բակլա
7. միամյա դաշտավլուկազգի խոտաբույսեր՝ սուդանի խոտ, մոգար, չումիզա, ոլոռ, բակլա
8. կերային արմատապտուղներ՝ կերի և շաքարի ճակնդեղներ, գոնգեղ, շաղգամ, գազար, կարտոֆիլ, գետնախնձոր
9. կերի բոստանային մշակաբույսեր՝ կերի ձմերուկ, դդում, դդմիկ, կերի կաղամբ

27 **Տրվածներից 3-ը հողառաջացման գործոններ են: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. մայրատեսակը կամ հողառաջացնող ապարը
2. հողի բերրիությունը
3. հողի ջրաթափանցիկությունը
4. հողի աղտոտվածությունը
5. հողի հասակը
6. հողի գույնը
7. բուսական և կենդանական աշխարհը
8. հողատարման գործընթացները
9. գյուղատնտեսության վիճակը

28 **Տրվածներից 3-ը բանջարային մշակաբույսերի ցանքի ձևեր են: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. շարմաղային ցանք
2. շաղացան
3. շրջանաձև ցանք
4. զիգզագաձև ցանք
5. ակոսային ցանք
6. շարքերով ցանք
7. բնային ցանք
8. աշնանացան
9. երկցան

29 **Հետևյալ պնդումներից 3-ը ճիշտ են: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. ՎԴԻՊ-ում թունաքիմիկատները պետք է օգտագործվեն որպես ուղղիչ միջոց
2. վնասակար օրգանիզմների հայտնաբերման դեպքում պետք է անտեսել ՏՎՇ-ն
3. ՎԴԻՊ-ում թունաքիմիկատները համարվում են պայքարի հիմնական միջոց
4. ՎԴԻՊ-ն ընդգրկում է վնասակար տեսակներին ճնշելու այնպիսի միջոցներ, որոնք ոչնչացնում և նվազեցնում են օգտակար օրգանիզմների գործունեությունը
5. ինտեգրված պայքարի համակարգում խնդիր չի դրվում լիովին ոչնչացնելու վնասակար օրգանիզմները
6. ՎԴԻՊԻ-ի ժամանակ ինսեկտիցիդների կիրառումը անսահմանափակ է
7. կարանտինային միջոցառումների նպատակը վնասատուների խտության բարձրացումն է
8. պայքարի միջոցառումների արդյունավետությունը գնահատվում է պեստիցիդների օգտագործման և վնասատուների թվաքանակի մոնիթորինգի հիման վրա
9. վնասված բույսերը պետք չէ արագ հեռացնել ջերմոցից

30 **Հետևյալ պնդումներից 3-ը ճիշտ են: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. օրգանական երկրագործությունում հողի պարարտացման համար նախատեսված նյութերը պետք է լինեն սինթետիկ ծագման, որպեսզի ապահովեն բարձր արդյունավետություն
2. հողի էդաֆոնը հողում բնակվող բոլոր կենդանի օրգանիզմների ամբողջությունն է, որոնք ապահովում են նյութերի և էներգիայի շրջանառությունը և հումուսի կուտակումը
3. հանքային պարարտանյութերի կիրառումը բարձրացնում է հողի միկրոֆլորայի ակտիվությունը
4. հողում տարրալուծվող նյութերը նպաստում են հումուսագոյացմանը, իսկ մյուս մասը կարող է ամբողջությամբ հանքայնանալ
5. սիդերացիան պարարտացման ֆիզիկական տեխնոլոգիա է, որը ենթադրում է տվյալ հողատարածքում մեծ քանակով տնկիների մշակություն
6. հողի մշակումը և մեխանիկական ազդեցության կայուն աճը ժամանակի հետ առաջացնում է դրական երևույթներ
7. բերրիությունը հողի հիմնական հատկությունն է, որով բույսերն ապահովվում են սննդատարրերով, ջրով և բույսերի կյանքին անհրաժեշտ այլ գործոններով
8. սիդերացիայի դեպքում մշակաբույսի ձևավորած կանաչ զանգվածը չի վարվում հողի տակ
9. հողի բերրիության նախապայման են հանդիսանում հանքային նյութի բավարար քանակը և հողի ֆիզիկական ակտիվությունը